

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ՆԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

ԱՂԵՏՆԵՐԻ ՆՈԳԵՌՈՐ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Նովիաննես Ե Դրասխանակերպոցի պատմիչի (Կթղ. 898-929 թթ.) «Պատմություն Նայոց» և Թ-Ժ դարերի պատմիչ Թովմա Արծրունու «Պատմություն փանն Արծրունեսաց» երկերը ոչ միայն կարևոր պատմական սկզբնաղբյուրներ են այդ դարերի Նայասարանի և հարակից երկրների պատմության, այլև ցույց են փայլա պատմության ընկալման, մեկնաբանման ու հոգևոր վերաիմաստավորման այն սկզբունքները, որոնք արդեն ձևավորվել էին հայ պատմագրության մեջ և որոնք այնուհետև որպես ավարտուն մի համակարգ իրենց արտահայտությունն էին գտնելու ԺԳ-ԺԴ դարերում Կիրակոս Գանձակեցու և Մարտիրոս Օրբելյանի պատմություններում:

Քանի որ Բագրատունյաց շրջանում Աշոտ Ա Բագրատունու թագավորությանը (թգվ. 885-890 թթ.) հաջորդում է Սմբատ Ա Բագրատունու (թգվ. 890-914 թթ.) թագավորության ողբերգական իրադարձություններով լի շրջանը, որի բարձրակետը դառնալու էր հենց իր՝ Սմբատ թագավորի նահապետությունը, ուստի մեր այս հոդվածում կներկայացնենք նրա գահակալության և հաջորդող շրջանի իրադարձությունների և հասած աղերների ու չարիքների՝ այս երկու պատմիչների փյուռ մեկնաբանություններն ու գնահատականները:

Աշոտ Ա Բագրատունու վախճանման առիթով նրա ունեցած թագավորական իշխանությունը Թովմա Արծրունին բնորոշում է ծննդոց գրքից բերված հետևյալ վկայությամբ.

Թովմա

...ձևն նորա յամենեսին և ամենեցուն ձևոք ի նա՛:

Գիրք Ծննդոց

և նա եղիցի այր վայրագ. ձևոք նորա յամենեսին, և ձևոք ամենեցուն ի նա (ԺԶ 12):

Ծննդոց գրքի այս խոսքերը Տիրոջ հրեշտակն է ասում Սառայի աղախին Ագարին նրա ծնվելիք որդի Իսմայելի համար: Ընդգծված կապակցությունը Թովման դուրս է թողել և բերել նախադասության երկրորդ մասը, քանի որ առաջինը կհակասեր թագավորի բարոյական այն իդեալին, որը կարող էր ունենալ հայ պատմիչը:

Աշոտի որդու՝ Սմբատի թագավորության ժամանակ 893-94 թթ. փրկի է ունենում

1 Թովմա Արծրունի, Պատմություն փանն Արծրունեսաց, աշխար. Մ. Դարբինյանի, Եր., 2007, էջ 245: Այսուհետև սույն գրքից կարարված հղումները՝ շարադրանքի մեջ:

Դվինի երկրաշարժը, որին պատմիչը նվիրել է իր Պատմության 22-րդ գլուխը՝ «Կործանումն քաղաքին Դունի ի սաստիկ շարժմանը»: Արարական արշավանքները որպես աստվածային պատուհաս ներկայացնող պատմիչը առավել էս հիմքեր ուներ բնական աղերը որպես երկնասասար պատիժ ներկայացնելու: Եւ ինչպես հեղափոխական շրջանի հայ պատմագրության մեջ է Անիի կործանումը ներկայացվում որպես անեցիների մեղքի արդյունք, այսպես նույնպես Թովման է գրում Դվինի համար, թե այն լեցուն էր «ազգի ազգի պղծութեամբ յավարացեալ յղվացեալ»: Պատահական չէ, որ նա երկրաշարժը նկարագրում է որպես դժոխքի բացում, որն իր մեջ է առնում քաղաքի մեղավոր բնակիչներին:

Երկրի բացվելու և փայտեր շինություններն ու մարդկանց ողջ-ողջ գերնի փակն անցնելու մասին գրում է, որ նրանց փնտրել իրենց գերեզմանները դարձան, «գունակ կորխային բանակին յանդեղաքակ փունսն գրնակությունսն արարին» (էջ 255): Ինչպես Աստվածաշնչում է պատմվում (տե՛ս Թուոց ԺԶ 28-33), Կորխը Մովսեսի հորեղբորորդին էր, որն ապստամբեց Մովսեսի և Ահարոնի դեմ՝ ուրանալով անգամ Աստծուն, և Տերը նրան պատժեց երկնային ազդմամբ: Նրան հետևող 250 ղեկավարները վառվեցին երկնառաք կրակից, իսկ Կորխը իր երկու զինակիցների հետ կույ գնաց բացված երկրից ժայթքած կրակին: Եւ ահա այսպես Դվինի բնակիչներին, որոնք կույ գնացին բացված երկրին, պատմիչը համեմատում է երկնային պատիժ հրին կույ գնացած Կորխի հետ: Պատմիչը գուցաևեռ անցկացնելով նիւվեացիների ապաշխարության հետ՝ գրում է, թե Դվինի բնակիչներին սիրտը քարի նման մնաց, որի համար փռելի ունեցավ այս պատուհասը:

Այս երկրաշարժի ժամանակ ավերվեց նաև Դվինի Մայր փառարը և մի շարք եկեղեցիներ, որոնց փլատակների մեջ բազմաթիվ մարդիկ գոհվեցին: Քանի որ փարակույս կարող էր առաջացնել այն հարցը, թե ինչու չխնայվեց նրանց, ովքեր գտնվում էին եկեղեցում, ուստի պատմիչը Դվինի եկեղեցիների կործանումը համեմատում է Ոգիա թագավորի մահվան ժամանակ, Եսայի մարգարեի օրոք սերովբեների ձայնից Տիրոջ փառարի ավերվելու հետ, որով Տիրոջ զայրության փառարի ավերման նախօրինակն իսկ մատնացույց է առնում Սուրբ Գրքում:

Եթե Թովման Դվինի կործանումը համեմատում է Կորխին պատուհասած հարվածի հետ, ապա այս շրջանի Նայոց Նայրապերի՝ Գետրգ Բ Գատնեցի Կաթողիկոսի (կթղ. 877-897թթ.) աղոթքը առ Աստված Դվին քաղաքի համար համեմատում է Սողոմոնի կործանումից հետո Աբրահամի աղոթքի հետ (հմմտ. Ծննդ. ԺԸ 23-32):

Դվինի այս երկրաշարժի մասին գրում է նաև Նովհաննես Դրասխանակերպցին: Նա ասում է, որ Դվինի երկրաշարժից ողջ մնացածներին մխիթարության խոսք է ուղղում Սեւանի Մեսրոպ կրոնավորը, որը մի քանի փարի անց հայոց հայրապետական աթոռին վոխարինելու էր Գետրգ Բ Գատնեցուն: Ապագա Նայրապերը Դվինի բնակիչներին ուղղված թողթը սկսում է հերևյալ փողերով. «Չհամաշխարհականդ խորփակումն, գոր բուռն գորութեամբ մանրեալ *ճնխաց սաստուածային հնձանահար ի բարկութեան* մեղաց մերոց բազմացելոց»:

Դվինի երկրաշարժի նկարագրությունից հետո Դրասխանակերպցին գրում է Գագիկ Աբումրվանի դավաճանության և սպանվելու մասին.

Դրասխանակերպրցի

Դրժաղաւ իշխանն Գագիկ ջանայր զիրս նենգութեանն ի խորոջ սրտին **ընդ գրուանաւ թագուցանել**, ոչ գիտելով թէ **չէ ինչ գաղտնի, որ ոչ գայցէ** ի յայր (Էջ 176):

Ավերարան Մարկոսի

...մի եթէ գա՛յ ճրագ գի ընդ գրուանաւ ղնիցի... և ոչ եղև ինչ գաղտնի, եթէ ոչ է յայր գայցէ (Դ- 21-23):

Պատմիչը իշխանին բնորոշում է **դրժաղաւ** բառով և այս մեկ բնորոշմամբ փաստորեն երկու բնորոշում է փալիս՝ դրժող և դավող: Ինչ վերաբերում է նենգությունը սրտի խորքում, որպես գրվանի ներքո թաքցնելուն, ապա այստեղ, ինչպես րեսնում ենք, պատմիչը նկարի է ունեցել Մարկոս ավերարանչի խոսքերը: Վերցնելով համեմատվող պարկերը, Դրասխանակերպրցին, սակայն, փոխել է բովանդակությունը: Ավերարանում եթե սավում է, որ յույսը գրվանի փակ պերթ չէ պահել, ապա Դրասխանակերպրցին գրում է, որ նենգությունը սրտի խորքում, ինչպես գրվանի ներքո հնարավոր չէ պահել:

Դրասխանակերպրցին այնուհետև գրում է Գևորգ Կաթողիկոսի վախճանման, ապա և Մաշտոց Եղիվարդեցու ընտրության ու վախճանման մասին, որից հետո հայրապետական գահին է բարձրանում ինքը՝ պատմագիր Կաթողիկոսը:

Իր համեմատությունները Սուրբ Գրքի վրա խարսխող Դրասխանակերպրցին հայրապետական գահին իր անարժան լինելը ներկայացնում է սեփական աչքի գերանը չբեռնելու և եղբոր աչքի շյուղը րեսնելու (Մտթ. Է 3) օրինակով. «Սակայն կուրացեալ գերանով մեղաց ինոց՝ որ բառական գանձն վարկայ ղնել՝ ի նշմարել զշիղ յական եղբորն» (Էջ 183): Այստեղ, ինչպես րեսնում ենք, համեմատությունը ինչ-որ չափով արհեստական է, ևս ևս խրթին ու մթին, որովհետև չի հասկացվում՝ եղբորը ասելով որևէ մեկին՝ նկարի ունի, թե այն պարզապես համեմատության ամբողջացման համար է հիշվում: Այստեղ, սակայն, րեսնում ենք գեղեցիկ մեկնությունը աչքի գերան արհեստության, որն, ըստ Դրասխանակերպրցու, մարդկային մեղքերն են, որով պատմիչի մեկնարանմամբ ավերարանական րողը բացաբրվում է այսպես. «Ինչպես դու չես րեսնում թո գործած ծանր մեղքերը՝ գերանը, և րեսնում ևս ղիմացինի թեթև գանցանքը՝ աչքի շյուղը»:

Թե՛ Դրասխանակերպրցին և թե՛ Թովման մանրամասն գրում են Ավշին ոսրիկանի չարաչար մահվան մասին: Մակայն Թովման հանդես է բերել սրեղծագործական մտրեցում՝ առաքյալի խոսքը հարմարեցնելով իր շարադրանքին: Առաքյալը ասելով՝ «գործել գանարժան», թվարկում է այդ անարժան գործերը մի քանի րողով, Թովման, սակայն, միանգամից ընդհատում է նախադասությունը «գանարժան» բառից, նախ, որովհետև, առաքյալի թվարկած բոլոր մեղքերը չէ, որ համընկնում էին իր ակնարկած մեղքերին, և երկրորդ՝ նման երկայն թվարկումը արդեն կխախտեր իր շարադրանքի կառուցիկությունը, մանավանդ որ, հաջորդող շարադրանքը ևս այստեղ խարսխված է սուրբգրային վկայակոչումների վրա:

Պատմական յուրաբանչյուր որոշակի իրավիճակին համարժեք մի րող Սուրբ գրքում և հարկապես մարգարեություններում որոնող և այդ րողը որպես կանխասացություն րվյալ իրավիճակի համար ներկայացնող Թովման այս հարվածում գրելով, որ ամայացած

երկրում մարդիկ մեռյալներին էին ուրում, քանի որ դաժան սովի էին մաքնված, ուստի այս վիճակին համահունչ վկայակոչում է Եզեկիել մարգարեի հերեւոյալ փողերը.

Թովմա	Եզեկիել մարգարե
Կերիցն հարբ գորդիս, եւ գորդիք զհարս (Էջ 267):	Նարբ կերիցն գորդիս ի միջի բում, եւ որդիք կերիցն զհարս (Ե 10):

Այսպեղ ես բուն ասելիքը ամբողջովին համընկնում է եւ միայն շարադրանքի կառուցիկությունը եւ սեղմությունը պահելու համար է, որ Թովման ուղղակիորեն սղել է մարգարեի խոսքերը: Եզեկիել մարգարեի այս խոսքերից անմիջապես հետո Թովման գրում է. «Որպէս եւ առ Վեսպիանոսին եղև»: Այսինքն՝ այս խոսքերը որպէս կանխասացություն նախ իրականացան Վեսպիանոսի ժամանակ՝ պաշարված Երուսաղեմում, ապա արդեն իր նկարագրած իրադատությունների ժամանակ:

Դրասխանակերպցին գրել է Սաղմոսաց գրքի հերետոդոթյամբ, որով պայմանավորված են առկա փարբերությունները: Եթե Սաղմոսաց գրքում ասվում է, որ մեր վրա թող չգան ամբարբավանների ուրբերը, ապա Դրասխանակերպցին այս խոսքերը որոշակիացնելով եւ նկարագրվող իրադատության հետ կապելով եւ նկարի ունենալով Ափշինին, ասում է՝ մեր վրա չեկավ նրա ամբարբավանության ուրբը:

Թովմա Արծրունին Ափշինի բացառիկ չարությունը ներկայացնում է Եսայի մարգարեի հերետոդոթյամբ.

Թովմա	Եսայի մարգարե
եւ դժոխք ի ներքուսր դառնացան ի սպարսիւնմա (Էջ 268):	Դժոխք ի ներքուսր դառնացան ի սպարսիւնն թեզ (ԺԴ- 9):

Նա ցանկանում է ասել, որ անգամ դժոխքի համար անսովոր էր նման չարությունը:

Այսպիսով, նույնիսկ այն դեպքերում, երբ պարմիչը ոչ թե սուրբգրային որևէ վկայակոչում է կարարում հավասարելու իր խոսքը, այլ պարմական շարադրանքում իսկ, որևէ իրադատություն ներկայացնում է համապարասխան իրավիճակային ընդհանրություն ունեցող սուրբգրային փողերի հերետոդոթյամբ:

Սրեղծագործական առումով բավականին հերաբրբիր է հաջորդ վկայակոչումը: Նկարի ունենալով Երեմիա մարգարեին՝ Դրասխանակերպցին գրում է. «Չի արդարեւ իսկ ըսր նախագուշակ փեսողին»: Նախորդ վկայակոչումները հարաբերվում էին *մխիթարել* բառի հետ, քանի որ պարմիչը ներկայացնում էր երկիրը պարած վիշտը եւ սուգը: Այսպեղ ես շեշտվում է նույն գաղափարը. «ոչ կարեն մխիթարել զմեզ որդիքն մեր՝ փարակուսեալք եւ գերեալք եւ հալածեալք եւ սպանեալք եւ ննջեալք ի կիցս ամենայն ճանապարհաց»: Այս փողերը պարմիչը գրել է Երեմիայի ողբի հերեւոյալ հարվածի հերետոդոթյամբ. «Չի հեծի եղեն յինէն մխիթարիչք իմ, որ դարձուցանէ զանձն իմ յիս: Մարնեցան որդիք իմ յապականութիւն, զի գորացան թշնամիք իմ» (Ա 16):

Շարունակելով ողբի իր խոսքը, արդեն առավել մեծ ընդհանրացմամբ է գուգահեռ

անցկացնում Սուրբգրային երկրի և Նայոց աշխարհի միջև: Վերստին վկայակոչում է Եսայի մարգարեին.

Դրասխանակերպցի

Նրեապան կործանեցաւ և խոնարհեցաւ փառքն **Սիօնի** (Էջ 222):

Եսայի մարգարե

Զի լքաւ **Երուսաղէմ**, և Նրեապան կործանեցաւ (Եսայի Գ 8):

Ինչպես րեսնում ենք, այսպեղ թե՛ շարադասական փոփոխություն է կատարվել և թե՛ Երուսաղեմի փոխարեն Սիոն է ասվում: Երուսաղեմը շեշտված աշխարհագրական հասկացություն էր: Քանի որ Նայոց աշխարհի պարագայում պարմիջի համար նման շեշտված աշխարհագրական հասկացություն չկար, ուստի նա Երուսաղեմը փոխարինել է Սիոնով, թե՛ առավել մեծ հոգևոր խորհուրդ հաղորդելով և թե՛ ընդհանուր վերացարկմամբ վկայակոչելով մարգարեի խոսքը:

Դրասխանակերպցին, սակայն, սկզբում գրում է նրանց արքան հեղման մասին, շարադրանքը շարունակում իր փողերով, ապա նոր վկայակոչում քահանաների մարմիններին վերաբերվող նախորդ փողը.

Դրասխանակերպցի

Եւ դիակունք ծառայից Աստուծոյ գէշ թոչնոց երկնից արկան, և մարմինք սրբոց Բարձրելոյն ի կերակուրս գագանաց րուան (Էջ 223):

Գիրք Սաղմոսաց

արկին գդիակունս ծառայից Քոց՝ գէշ թոչնոց երկնից, և գմարմինս սրբոց Քոց գագանաց երկրի (ՆԸ 2)

Նաջորդ գլխում պարմիջը ներկայացնում է, թե ինչպես է Յուսուֆը սպանում հայ իշխաններին և դարձյալ խոսքը սկսում է աստվածաշնչային գուգահեռով: Վկայակոչելով Զաբարիա մարգարեին, հայ ժողովրդին պարուհասած աղերները համեմատում է երկինք բարձրացած գերանդու հեպ՝ «գթուցեալ գերանդին ընդ օդս» (Էջ 223), նկարի ունենալով Զաբարիայի «ահա գերանդի թուցեալ» (Ե 2-3) խոսքերը: Այս պարկերով ցանկանում է ասել, որ մեր գործած մեղքերը երկինք բարձրացան որպես մի սուր և իբրև պարիժ իջնելով սկսեցին հնձել մեզ:

Դրասխանակերպցու Պարմության Խճ- գլուխը նվիրված է Սմբար թագավորի նահապակությանը: Նկարագրելով, թե ինչ չարչարանքների ենթարկեց նրան Յուսուֆը՝ շարունակում է «ըստ բանին Յոբա», այսինքն՝ չարչարանքները նկարագրվում են Նոբի կրած չարչարանքների հերևողությամբ: Նոբի չարչարանքները այսպեղ վարպետրեն հարմարեցվել են Սմբար թագավորի կրած չարչարանքների հեպ:

Երբ թշնամիների հսկողության ներքո էր գտնվում Բեթղեհեմի մոտ կղած աղբյուրը, և Դավթին հավարարիմ երեք գորավարները գնում և այդ աղբյուրից ջուր են բերում Դավթի համար, նա չի խմում ջուրը և ընծայում է Տիրոջը (Բ Թ-ագ ԻԳ 15-17): Դրասխանակերպցին գրելով Սմբարի կրած չարչարանքների մասին, ասում է, որ նրան նույնիսկ ջուր և կերակուր չեն փալիս, սակայն, անկախ փալուց, նա հրաժարվում էր այդ ամենը ընդունելուց. «Ոչ միայն

զի դահիճքն արգելուին զհարկառոտ պէրս ճաշակոցն, քան թէ առանկ յիւրոց իսկ կամաց անսուտագեալ՝ Աստուծոյ ընծայէր գալիսելի զճաշակսն, որպէս ուրեմն երբեմն Դաւիթ՝ ի ծարասս իր զջուրն, որ ի ջրհորոյն Բեթղահէմի» (Էջ 238):

Նամենաբարոյնների բազմաստիճան գուգորդմամբ թե վերացական ինչ զուգահեռի մեջ կարելի է դիտարկել պարմական փաստը, երևում է Առակաց գրքի հեղինակից: Սողոմոնի առակներից մեկում ասվում է. «Տգրուկը սրբով սիրած երեք դուստր ուներ, երեքն էլ չկշարացրին նրան, չորրորդն էլ չկարողացավ կշարացնել, որպեսզի նա ասեր. «Բավական է»: Գերեզմանն ու մահը, կանանց սերն ու փարփարոսը, հողը, որ չի հագնում ջրով, ջուրը և կրակը երբեք չեն ասում. «Բավական է» (Առակ I, 15-16):

Ինչպես րեսնում ենք, այսպեղ փրոուկի չորս դուստրերի միջոցով այլաբանորեն ներկայացվում են շարունակաբար անհագ մնացող չորս հասկացությունները: Յուսուֆի՝ հայերի արյունից անհագուրդ լինելը Դրասխանակերպոցին համենաբար է այս առակի փրոուկի հեղ: Դրասխանակերպոցին, սակայն, առակը պարզեցրել է, և օրինակը ավելի շարքերվում է երկուով փրոուկի՝ մարդկային արյունը ծծելու հարկանիշից: Պարմիչք, որ ոչ թե ընդհանրապես փրոուկի, այլ հենց Սողոմոնի առակի անհագությունը խորհրդանշող փրոուկի մասին է գրում, երևում է հենց իր իսկ խոսքերից. «Եւ գայս ևս ոմանս ըսպ Սողոմոնեան փրկին առ սակաւ սակաւ գարինս նոցա ծծէին» (Էջ 248): Այսինքն, Սողոմոնյան առակի փրոուկի նման նրանք գերիների արյունն էին շարունակաբար ծծում:

Թե ինչպես է ազդում աստվածաշնչային բնագիրը պարմական շարադրանքի վրա, պայմանավորելով պարմողական և նկարագրական շարք հարվածներ՝ երևում է հեղինակի օրինակից, որը նաև գալիս է վկայելու, թե առանց հայ պարմագրոյան սուրբգրային շերտի վերհանման հնարավոր չէ ճիշտ հասկանալ անգամ պարմագիրական բնույթի մի շարք հարցեր:

Դրասխանակերպոցին հայ գերիներին նվիրված այս գլխում գրում է, որ նրանց մեջ կային երկու եղբայրներ՝ Դավիթը և Գուրգենը Գնունյաց քոհմից: Երբ նրանց բերում են Յուսուֆի առջև, վերջինս նրանց փորձում է գայթակղեցնել փարբեր խոսքումներով և պարզեցնելով: Խոսքանում է իր փրոույան կեսը փաղ, ինչպես նաև «բազում զգեստս և գարդս ոսկեճամուկս, և ծիրանիս և երևելի լակոնացի և բեհեզս» (Էջ 252):

Նաջորդ գլխում Դրասխանակերպոցին ներկայացնում է իր թղթակցությունը Կ. Պոլսի Նիկողայոս պարբիարքի և բյուզանդական Կոստանդին կայսեր հեղ: Այսպեղ էլ թղթի՝ որպես գրական ժանրի գրոյությունն է ներկայացվում հոգեւորականներին ուղղած գրական թղթերի նախօրինակ եղող Պողոս առաքյալի թղթերի և հարկապես՝ նրանց կանոնական, կաղապարային ձևերի՝ սկզբածքների ու վերջավորությունների միջոցով:

Նկարագրելով Նայասարանի վիճակը՝ Դրասխանակերպոցին գրում է կայսրին. «...հալածեալք եղեալք ի մահառիթ և ի նենգառո շնչոյն Ամաղեկայ», և շարունակում է զուգահեռների նույն ընթացքը՝ հայոյան հակառակորդներին ներկայացնելով հրեաների հակառակորդների միջոցով:

Դրասխանակերպոցին իր փրկվելը Յուսուֆից այսպեղ ևս ներկայացնում է Սուրբ Գրքում հիշվող հրաշքով փրկությունների հեղ, հեղինակ զուգահեռներով. «Արարաք կորզեալ ևհան ի ժանեաց վիշապին, և ընդ Եղիայի փախարեայ եղէ ի Սարեփոայ

Սիդոնեան ի մարգարեագրան Յեզայել է և ընդ Պողոսի վանդակա կախեցայ ընդ պարսպին Դամասկեայ»: Նկարի ունենալով Նիսուսի՝ «Եւ յորժամ հալածիցն զձեզ ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ» (Մարթ. Ժ 23) խոսքերը, իր րեղից րեղ հալածական լինելը համարում է կատարումը րերունական պարվերի. «Եւ ըստ րերունեան հրամանի հալածեալ ի քաղաքէ քաղաք, ահա հասեալ կամ առ դրունս հօրագունիցդ»՝ նկարի ունենալով կայսրերի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը:

Վասպուրականի Գագիկ թագավորը թեև սկզբնապես դաշնակցում է Յուսուֆի հետ, սակայն րեսներով, որ նա նպատակ ունի ոչնչացնելու ընդհանրապես հայոց գինական ուժը, սկսում է խուսափել նրանից, որից զայրացած Յուսուֆը հեղափոխելով փորձում է բռնել նրան և մի շարք այլ հայ իշխանների: Վերջիններիս՝ ոսպիկանից խուսափելը Դրասխանակերպցին ներկայացնում է «Երգ Երգոցի» այժյամի ուրերի պարկերով՝ ցանկանալով այժյամի թեթևասահությամբ ներկայացնել հայ նախարարների՝ Յուսուֆից խույս րարը:

Դրասխանակերպցին բավականին մանրամասն է գրում Աշոտ Երկաթի և Աշոտ արքայորդու միջև ծագած գժրության մասին, որը բազում ավերներ պարճառեց Նայասարանին՝ թուլացնելով նաև Բագրատունյաց թագավորության կենրոնաձիգ իշխանությունը: Եղբայրասպան այս հակամարտությունն ընթանում էր փոփոխական հաջողություններով: Դրասխանակերպցու համակրությունն այս պայքարում, բնականաբար, Աշոտ Երկաթի կողմն էր: Ահա այս պարճառով վերջինիս կրած անհաջողությունների մասին նա ցավով և ողբով է գրում: Արքաեղբոր պարտությունների դեպքում, սակայն, նա դրանք համարում է որպես աստվածային կամքին ընդդեմ գնալու արդյունք, որին հաջորդել է նման հարվածը: Այսպես, երբ Աշոտ իշխանը իր աներ Սեուդա իշխանի որդու հետ փախուստի է մտնում արքայորդու գորբերին, Դրասխանակերպցին այն համարում է, որպես կատարումը սուրբգրային խոսքերի, գրելով. «Ի փախուստ ատաջի նոցա դառնային գորք Աշոտյ արքայորդուն, և զբազումս ի գորացն սրոյ ճարակ րային ըստ իմաստունոյն բանի, **թե՛ Տէր ամբարտաւանից հակասուկ կայ**» (Դրասխ. էջ 300-301): Որպես իմաստունի խոսքեր ընդգծված այս րողով Դրասխանակերպցին բառացիորեն վկայակոչել է Սողոմոնի ատակների երրորդ գլխի 34-րդ րողը: Իր Պարմության ԿԴ գլուխը Դրասխանակերպցին նվիրել է Գագիկ Արծրունու, ինչպես նաև Յուսուֆ ամիրայապետի կողմից ազար արձակվելուն և նրա վերստին գործած չարիքներին:

Ինչպես հայրնի է, Դրասխանակերպցին իր պարմությունը գրել է մի րեուական ժամանակահատվածում, այս ընթացքում ատանձին դեպքերում փոխելով իր վերաբերմունքը այս կամ այն երևույթի կամ պարմական անձնավորության հանդեպ: Ասվածը լավագույնս երևում է Գագիկ Արծրունու օրինակով, որի մտք, ի դեպ, կյանքի վերջին շրջանում, ապաստանում է Դրասխանակերպցին: Պարմության նախորդ գլուխներում Գագիկ թագավորին եթե պարմիչը մեղադրում էր Բագրատունյաց թագավորությունը թուլացնելում, երկպառակություն սերմանելում՝ Յուսուֆի կողմն անցնելու համար, ապա այս գլխում արդեն, մեծարանքով է խոսում Վասպուրականի թագավորի մասին: Իհարկե, այս հանգամանքը պայմանավորված էր միայն անձնական դրդապարճառներով, այլև այն հանգամանքով, որ Գագիկ Արծրունին ևս գիտակցում է, որ իր քաղաքականությունը կործանարար է ոչ միայն

Բագրապունյաց, այլև իր թագավորության ու նաև իր համար: Գագիկի այս շրջադարձը հիշյալ գլխի սկզբում պարամիչը ներկայացնում է հերևյալ փողերով. «Բայց թագաւորն Գագիկ ասարանօր իբր զվճիպ իմն միտս զգասարս սրացեալ ինքեան մաքուր խորհրդով, զանգոյսս ի գոյ ամէր եւ զմերձակայսն իւր կեանս յօգուտ բազմաց դաստիարակէր» (Էջ 324):

Յուսուֆի ձերբակալության և Գագիկի վերաշինությունների կարճ այս ընթացքը Դրասխանակերպոցին բնորոշում է՝ վկայակոչելով Առակաց գրքի փողերը, վերջիններս սակայն, համառոտելով ու վերաշարադրելով այնպես, որ Սողոմոնի իմաստությունը վերաբերող փողերը միափոխվեն իր պարմությանը, ինչպես նաև համահունչ դառնան Գագիկի գործունեությանը:

Դրասխանակերպոցու Պարմության վերջին գլուխը նվիրված է Բարկեն և Սահակ իշխանների նահապետությանը, որոնց, և Նայոց աշխարհի ավերման ողբով Պարամիչը ավարտում է իր Պարմությունը: Սակայն դա միայն անհույս ողբ չէ, այլ թե՛ մեղադրանք անմիաբանության համար և թե՛ հորդոր և կոչ միասնության, որի դեպքում թշնամիներն անգոր կլինեն ավերելու մեր երկիրը: Պարմության այս գլխի վերջում Դրասխանակերպոցին սուրբգրային երեք վկայակոչումների և զուգահեռների միջոցով ժամանակակիցներին և հաջորդ սերունդներին է ուղղում հերևյալ պարզամտ ընդհանրացումը. «**Ձի թէ ժողովրդեան իւնոյ, սաւ յուեալ է ՚ր ինձ, կսաւ Էսրայէլի զճանապարհս իւն զնացեալ էր՝ որպէս զոչինչ մի խոնարհ արարեալ էր իւն զթշնամիս նորս և և ի վերայ նեղաց նորս արկեալ էր զձեռսն իւն:** Այլ վասնզի ըստ կարգի պաճարաց և անասնոց անմարից երկրապիշք հողեալք և այլապէս ի մէջ ինքեան ցուցաք զօրինակ պարկերին և նմանութեան Տեառն, վասն այստրիկ թշնամիք Տեառն սրեցին մեզ, և յանպառաքոյծ իտզից և յանցաւորաց ճանապարհի *կոխեցար իբրևն զկաւ զոնեաց*՝ և ի գլուխս մեր կուրեցան քարինք ձորոյն Նաբովրայ» (Դրասխ. էջ 360-361):

Ընդգծումներից առաջինը բառացիորեն վերցված է Սաղմոսաց գրքից (Ձ 14-15), ավելացված է միայն *սաւ*, որով թե՛ աղբյուրն է ակնարկվում, և թե՛ նշվում է, որ Տիրոջ խոսքն է վկայակոչվում: Այս վկայակոչմամբ պարամիչի ասելիքն այնքան համահունչ ձևով է շեշտվում, որ եթե ժողովուրդը ընթանար աստվածային ճանապարհով, թշնամիները կխոնարհվեին նրա առջև և ժողովրդի նեղ իջնների վրա կիջնէր Տիրոջ ձեռքը: Սրան հաջորդում է Դրասխանակերպոցու մեկնաբանությունը, սակայն քանի որ անմիտ անասունների նման երկրապիշ եղանք և ոչ երկնահայեաց, ահա այս պարճառով արդեն մենք ուրքի կոխան եղանք մեր թշնամիներին: Այս պարճառով որոշակիորեն շրջափոխված է ներկայացված երկրորդ կապակցությունը, որը ևս վերցված է Սաղմոսաց գրքից (ԺԷ: 42-43): Սաղմոսաց գրքում Տիրոջ միջոցով ասվում է, թե «որպէս կաւ գոնեաց կոխեցից գոսաս», այսինքն՝ կավի նման կտրորվեն Տիրոջ ժողովրդի թշնամիները: Սակայն, քանի որ ժողովուրդը Տիրոջ ճանապարհով չընթացավ, ուստի արդեն մենք ենք, որ կտրորվեցինք կավի նման, և մեր գլխին կուրվեցին Նաբովրի ձորի քարերը:

Իմաստալիկ շրջափոխության է ենթարկված և այս վերջին համեմատությունը, որը վերցված է Նևու Նավեի գրքից (Է: 25-26): Թերևս գրչագրական վրիպակով ձեռագրերի ընդօրինակության ընթացքում Աբովրը Դրասխանակերպոցու Պարմության մեջ դարձել է Նաբովր: Նևու Նավեն Աբովրին ասում է՝ ինչպես դու սպանեցիր մեր ազգակիցներին,

այնպես էլ Տերը կստարակի քեզ և թոցեղակիցներին, որից հետո, «քարկոծեցին զնա ամենայն Իսրայելի քարամբք, և այրեցին զնոսա հրով, և քարկոծեցին զնոսա քարամբք, և կուրեցին ի վերայ նոցա կարկառ մեծ քարանց մինչև ցայս օր»: Ահա այսպեղ ևս Տիրոջ զայրույթին ևն արժանանում Տիրոջ ժողովրդի թշնամիները: Դրասխանակերպցին, սակայն, ինչպես արևնում ևնք, Նաբովրի ձորի համեմատությունն արդևն հայ ժողովրդի փառապանքների հետ է կապում: Վերջին երեք համեմատությունների նման շրջափոխությունը Դրասխանակերպցին կապարել է, որպեսզի ընդգծի, որ այդ ամենը, ինչպես Սուրբ գրքում, արդևն մեր թշնամիների դևն կուղղվի, եթև մենք ընթանանք Տիրոջ ճանապարհով: